

**2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Զեկուցող՝ Ս.Դավեյան**

Հայաստանի ազգային ագրարային համալսարանն իր առաքելությունը, ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրին, Բոլոնիայի գործընթացի և ռազմավարական պլանի դրույթներին համապատասխան շարունակում է կրթական, գիտական և խորհրդատվական գործունեության իրականացումն ու շարունակական բարելավումը:

Երկրի պարենային անվտանգության, անվտանգ սննդամթերքի արտադրության և արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի ձևավորման գործում ագրարային ոլորտն ունի բացառիկ կարևոր նշանակություն, ուստի այսօր համալսարանի առջև խնդիր է դրվում աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավանակող, բարձրորակ մասնագետների պատրաստման ապահովումը:

Համալսարանում շարունակվում են աշխատանքներ տանել ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգի լիարժեք ներդրման, արմատական ծրագրային բարեփոխումների իրականացման, ուսանողների ու դասախոսների ակադեմիական շարժունության խթանման, որակի ապահովման ու գնահատման Եվրոպական չափանիշների արմատավորման, շարունակական կրթության համակարգի վձևավորման, կրթության կազմակերպման և կառավարման գործընթացներում ուսանողների դերի ու ազդեցության բարձրացման և մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների ապահովման ուղղություններով:

**1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ 2017-18 ՈՒՍՏԱՐՈՒՄ**

2017 թվականի ընդունելությունից հետո բակալավրիատի առկա ուսուցման համակարգում ուսանողների թիվը՝ 2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 2390, որից.

Ագրոնոմիկական ֆակուլտետում – 318 ուսանող (13,3 %),

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուժական ֆակուլտետում՝ 263 (11%),

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում – 564 (23,6%),

Գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլ. տրանսպորտի ֆակուլտետում–202 (8,5%),

Հիդրոմելիորացիայի, հողաշին. և հող.կադաստրի ֆակուլտետում – 230 (9,6 %),

Տնտեսագիտական ֆակուլտետում –532 (22,3 %)

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում – 281 (11,7%):

2018 թվականի ապրիլի 1-ի դրությամբ համալսարանի առկա ուսուցման համակարգում ուսանողների թիվը կազմել է 2167, որից 544 (25 %) անվճար, իսկ 1623 (75 %) վճարովի ուսուցման համակարգում: 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ համալսարանի առկա ուսուցման համակարգում սովորել է 1775 ուսանող, որից 466-ը անվճար, իսկ 1309 (73,7%) վճարովի: այդ նույն ժամանակ 582 ուսանող գտնվել են տարկետման մեջ:

2017 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման 27 մասնագիտությունների գծով ուսանողների թիվը կազմել է 3903, որից 440 գտնվել են տարկետման մեջ, իսկ ընդունելությունից հետո՝ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման ուսանողների թիվը կազմել է 4940:

2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, համալսարանի մագիստրատուրայում 41 մասնագիտությունների գծով սովորողների թիվը կազմել է 131, որից 72 անվճար, 59 վճարովի ուսուցման համակարգում (առկա +հեռակա): 10 մագիստրանտ գտնվում են տարկետման մեջ:

2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ համալսարանի քոլեջի առկա ուսուցման համակարգում սովորողների թիվը կազմել է 302, որից 278-ը՝ անվճար:

2018 թվականի առկա ուսուցման ընդունելության արդյունքում համալսարանին հատկացված 119 անվճար և 1219 վճարովի՝ ընդամենը 1338 տեղերի դիմաց 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերով համալսարան փաստացի ընդունվել են 375 ուսանող, որից 51 անվճար, իսկ 324 վճարովի ուսուցման համակարգում: Ըստ ֆակուլտետների 1 կուրս ընդունվածների թվաքանակը հետևյալն է.

- Ագրոնոմիական մասնագիտություններում- 56,
- Անասնաբուժական, բուժական մասնագիտություններում–58,

- Պարենամթերքի տեխնոլոգիաների մասնագիտություններում–152,
- Տնտեսագիտական մասնագիտություններում-7,
- Ագրոբիզնեսի և շուկայաբանության մասնագիտություններում–11,
- Հիդրոմելիորացիայի և հողաշինարարության մասնագիտություններում–47,
- Գյուղ.մեքենայացման և ավտոմոբիլ.տրանսպորտի մասնագիտություններում - 44 ուսանող:

2017-2018 ուստարում համալսարանի առկա ուսուցման համակարգից հեռացվել են 177 ուսանող (նախորդ ուստարվա 175-ի համեմատ), որից 94 ուսանող (53,1%)՝ անբավարար առաջադիմության պատճառով, 9 ուսանող տեղափոխվել են այլ բուհեր, 2-ը չեն ներկայացել քննություններին, իսկ 72-ը ազատվել են իրենց դիմումի համաձայն: Ուսման վարձավճարը չմուծելու պատճառով ոչ մի ուսանող համալսարանից չի հեռացվել: Այստեղ հարկ եմ համարում նշել, որ անհանգստացնող է, այն հանգամանքը, որ մեծ թվով ուսանողներ հեռացել են 1-ին և 2-րդ կուրսերից (81 և 54 ուսանող), որը կազմում է հեռացված ուսանողների 76,3 %-ը:

Եթե նշված թվերին ավելացնենք նաև հեռակա ուսուցման համակարգից ուսանողների մեծաքանակ հեռացումները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր ուսանողական համակազմի համալրումը կապված է տարբեր դժվարությունների հետ, ապա հեռացումների այսպիսի թվաքանակը դառնում է շատ մտահոգիչ:

Հետևաբար համալսարանի բոլոր կառույցները և ողջ կոլեկտիվը պետք է անհրաժեշտ ամեն ինչ անեն համալսարանից հեռացումների թիվը կտրուկ նվազեցնելու առումով:

## **2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՑՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ուսումնական պարապմունքներին ուսանողների բարձր հաճախելիության ապահովումը եղել ու մնում է համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետների, ամբիոնների և ուսանողական խորհրդի մշտական ուշադրության կենտրոնում և իրականացվող շարունակական աշխատանքների արդյունքում վերջին տարիներին համալսարանում արձանագրվում է ուսանողների հաճախումների 90-93 % միջին ցուցանիշ:

2017-2018 ուստարում ուսանողների հաճախումների միջին ցուցանիշը կազմել է 91,3 %, նախորդ ուստարվա 91,5 %-ի համեմատ:

2017-18 ուստարում հաշվառումների և ստուգումների արդյունքում, ըստ ֆակուլտետների արձանագրվել են ուսանողների հաճախումների հետևյալ միջին ցուցանիշները.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում –94,8% (95,2%),

Անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետում –93,5% (96,5%),

Տնտեսագիտական ֆակուլտետում – 91,1 % (90,2 %),

Գյուղ. մեքենայացման ֆակուլտետում – 90,9 % (91,1 %),

Ագրոնոմիական ֆակուլտետում – 89,1 % (89,1 %),

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում–87,7% (91,3%),

Հիդրոմելիորացիայի և հողաշինարարության ֆակուլտետում –87,0% (87,1%):

Ուսանողների առավել շատ բացակայություններ՝ 9 % գրանցվել է 4-րդ կուրսերում, իսկ համեմատաբար քիչ բացակայություններ՝ 8,3 % 2-րդ և 5-րդ կուրսերում: Ըստ ֆակուլտետների ուսանողների հաճախումների 60 % և ցածր արդյունքներ գրանցվել են հետևյալ քանակությամբ.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆուկուլտետում – 284 անգամ,

Անասնաբուժական ֆակուլտետում – 223 անգամ,

Գյուղ մեքենայացման ֆակուլտետում – 217 անգամ,

Ագրոնոմիական ֆակուլտետում – 212 անգամ,

Հիդրոմելիորացիայի ֆակուլտետում – 160 անգամ,

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում – 160 անգամ,

Տնտեսագիտական ֆակուլտետում – 139 անգամ:

60 % և ցածր հաճախումների արդյունքներ առավել շատ գրանցվել են հետևյալ կուրսերում.

**Ագրոնոմիական մասնագիտություններում**

ԱՍԳ1 29 անգամ, ԱՍԳ 2-26 անգամ, ԱՏ1-20 անգամ, ԱՏ4-19 անգամ, ՊԳ1-33 անգամ

**Անասնաբուժական մասնագիտություններում**

Բուժ1-37 անգամ, Բուժ2-91 անգամ, ՍՓ1-35 անգամ, ՍՓ2- 38 անգամ

**Տեխնոլոգիական մասնագիտություններում**

ԳՏ1-37 անգամ, ՄՏ2-13 անգամ, ԳՏ2-21 անգամ, ԳՏ4-15 անգամ,

**Գյուղ.մեքենայացման մասնագիտություններում**

ԳԷ2-34 անգամ, ԳԷ3-21 անգամ, ԳՄՍ1-38 անգամ, ԳՄՍ4-14 անգամ, ՃԷԿ4-18 անգամ, ՃԷԿ3-19 անգամ

**Հիդրոմելիորացիայի և հողաշինարարություն մասնագիտություններում**

ԿԱ1-28 անգամ, ՄՁ1-14 անգամ, ՄՁ2-21 անգամ, ՄՁ4-30 անգամ

**Տնտեսագիտական մասնագիտություններում**

ԱԷԿ, ՍԷԿ1-16 անգամ, ՍԷԿ4-14 անգամ, ՖՎ3-16 անգամ, ԱԷԿ, ՍԷԿ2-18 անգամ,

**Ագրոբիզնեսի և շուկայաբանության մասնագիտություններում**

ԱԳ2-39 անգամ, ԱՊ4-17 անգամ, ԱՔ4-16 անգամ, ԱՔ, ԽՏ1-22 անգամ:

Հարկ եմ համարում նշել, որ վերլուծությունները ցույց են տալիս, որ համալսարանում ուսանողների անհարգելի բացակայությունների գերակշիռ մասը հիմնականում կենտրոնացված է վերը նշված կուրսերում և պետք է արձանագրել համապատասխան դեկանատների, ամբիոնների և մասնագիտության համակարգողների այս առումով ոչ բավարար աշխատանքը՝ հաշվի առնելով, որ ուսումնական տարվա ընթացքում դեկանատները պարբերաբար տեղեկացվել են այդ կուրսերի անբավարար հաճախումների մասին: Ուսանողների 60 % և ցածր հաճախումների արդյունքներ առավել շատ գրանցվել են հետևյալ ամբիոններում.

Ընդհանուր քիմիայի ամբիոնում՝ (ամբ.վարիչ Օ.Քամայան) – 105 անգամ, Հայոց պատմության և փիլիսոփայության՝ (ամբ.վարիչ Վ. Ոսկանյան) – 71 անգամ, Մանրէակենսաբանության՝ (ամբ.վարիչ Գ.Մարմարյան) – 66 անգամ, Ֆիզիկայի և ջերմատեխնիկայի՝ (ամբ.վարիչ Ա.Պապոյան)- 61 անգամ, Հայոց և ռուսաց լեզուների՝ (ամբ.վարիչ Ն.Սարգսյան) – 54 անգամ, Անասնաբուծության՝ (ամբ.վարիչ Տ. Չիտչյան) – 54 անգամ, Ագրոբիզնեսի կազմակերպման և կառավարման՝ (ամբ.վարիչ Հ. Ղազարյան) – 50 անգամ, Կենսագործունեության անվտանգության՝ (ամբ.վարիչ Հ. Հակոբյան) – 49 անգամ, Ընդհանուր կենսաբանության՝ (ամբ.վարիչ Մ.Բադայան)- 46 անգամ, Ինֆորմատիկայի՝ (ամբ.վարիչ Մ.Գրիգորյան) -42 անգամ, Գրաֆիկայի և մեքենաների նախագծման՝ (ամբ.վարիչ Ս.Մարիկյան) - 42 անգամ, գյուղ.էլեկտրիֆիկացման՝ (ամբ.վարիչ Գ.Վարդանյան) – 42 անգամ: Թվարկված ամբիոնի վարիչները պետք է հետևություններ անեն և անհրաժեշտ քայլեր

ձեռնարկեն ամբիոնում պատշաճ կարգապահություն հաստատելու, արդյունավետ ուսուցում իրականացնելու և ուսանողների հաճախումները կտրուկ բարելավելու առումներով՝ հաշվի առնելով նաև այն, որ նշված ամբիոններում նախորդ տարիներին նույնպես գրանցվել էին հաճախումների ցածր մակարդակ:

Ուսանողների հաճախումների վիճակը պատշաճ մակարդակի բերելու և անհարգելի բացակայությունները բացառելու համար պետք է համագործակցված աշխատեն ուսումնական գործընթացի կազմակերպող և իրականացնող բոլոր օղակները, ուսուցումը պետք է դարձնել հետաքրքիր ու արդյունավետ և պետք է ակտիվացնել մասնագիտության համակարգողների գործունեությունը: Ուսուցման ոլորտում անհրաժեշտ է ներդնել նոր տեխնոլոգիաներ և ուսուցման ու դասավանդման նորագույն մեթոդներ, անհրաժեշտ է մշտական հսկողություն սահմանել ուսանողների գիտելիքների շարունակական բարձրացման և պատշաճ հաճախումների ու ուսումնական կարգապահության ապահովման հարցերին:

Համալսարանում ամբիոնն է առաջնային պատասխանատվություն կրում ուսումնական գործընթացի կազմակերպման և արդյունավետ իրականացման համար և յուրաքանչյուր դասախոս ու ամբիոնի վարիչ իրենց աշխատանքը պետք է կազմակերպեն այնպես, որ ուսուցումը դարձնեն հետաքրքիր և ապահովեն ուսանողների հաճախումների և առաջադիմության բարձր ցուցանիշներ:

### **3. ԴԱՍԱԶԱԽՈՂՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 2017-18**

#### **ՈՒՍԱՐՈՒՄ**

Համալսարանում արձանագրվել է 49 դասաձախողում, անցած ուտարվա 73-ի համեմատ:

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում գրանցվել է 13 դասաձախողում, որից 4-ը չի լրացվել, Անասնաբուժական ֆակուլտետում գրանցվել է 8-ը, 2-ը չի լրացվել, Ագրոբիզնեսի ֆակուլտետում գրանցվել է 7-ը, 2-ը չի լրացվել Ագրոբիզնեսի ֆակուլտետում գրանցվել է 7-ը, 3-ը չի լրացվել Հիդրոմելիորացիայի ֆակուլտետում գրանցվել է 6-ը, 1-ը չի լրացվել Գյուղ.մեքենայացման ֆակուլտետում գրանցվել է 4-ը, բոլորը լրացվել են տնտեսագիտական ֆակուլտետում գրանցվել է 4-ը, 1-ը չի լրացվել:

Համալսարանում դասաձախողումների լրացումը կազմել է 73 %:

Առավել շատ դասաձախողումներ գրանցվել են հետևյալ ամբիոններում.

Ընդհանուր կենսաբանության ամբիոնում – 5 անգամ,

Ագրոբիզնեսի կազմակերպման և կառավարման ամբիոնում – 4 անգամ,

Օտար լեզուների ամբիոնում – 3 անգամ,

Գյուղ.մեքենաշինության տեխնոլոգիաների և նորոգման ամբիոնում – 3 անգամ,

Իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնում – 3 անգամ:

Պետք է նշել, որ դասաձախողման յուրաքանչյուր դեպք, նույն օրը քննարկվում է համապատասխան ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի հետ, համապատասխան անձինք զգուշացվում են և պրոռեկտորի ու ուսումնամեթոդական կենտրոնի աշխատակիցների հսկողությամբ իրականացվում են դասաձախողումների լրացումները:

Չնայած վերջին տարիներին, տարեց-տարի դասաձախողումների թվաքանակը նվազում է, այնուամենայնիվ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման, ուսումնական ծրագրերի լիարժեք կատարման և ընդհանրապես որակյալ կրթություն ապահովելու առումներով անհրաժեշտ է բացառել թե՛ դասաձախողումները և թե՛ ուշացումները:

#### **4. ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Համալսարանի առկա ուսուցման ուսանողների կիսամյակային քննաշրջանները պլանավորվել և իրականացվել են սահմանված ժամկետներում՝ ըստ ուսումնական պլանների և տարեկան աշխատանքային ժամանակացույցի:

Քննություններն անցկացվել են կենտրոնացված կարգով՝ ռեկտորատի ներկայացուցիչների, դեկանների, ամբիոնի վարիչների և Որակի վերահսկման հանձնախմբի վերահսկողությամբ:

Թույլ տվեք քննաշրջանների արդյունքները ներկայացնել ըստ առանձին կիսամյակների, կուրսերի և մասնագիտությունների.

##### **I կիսամյակ**

2017-2018 ուստարվա I կիսամյակում համալսարանում քննություններին պետք է մասնակցեին 2118 ուսանող:

I կիսամյակում ուսանող-քննության ընդհանուր թիվը կազմել է 7626, որից բուն քննաշրջանում իրականացվել են 6215-ը, որը կազմում է ընդհանուր թվի 81,5 %-ը;

Ուսանողների 4,8 %-ը քննություններին չեն ներկայացել, իսկ 13,7 %-ը քննություններին չեն թույլատրվել:

Քննաշրջանի արդյունքներով ուսանողների բացարձակ առաջադիմությունը նախորդ տարվա համեմատ աճել է 3 %-ով և կազմել է 80 %:

Քննություններին մասնակցած ուսանողների միջին առաջադիմությունը կազմել է 94,0% :

Ըստ ֆակուլտետների արձանագրվել են բացարձակ առաջադիմության հետևյալ արդյունքները.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում –85,5% (84%),

Անասնաբուժական, անասնաբուծական ֆակուլտետում–84,7% (83,6%),

Տնտեսագիտական ֆակուլտետում – 83,8 % (81,8 %),

Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության ֆակուլտետում–81,0% (68%),

Ագրոնոմիական ֆակուլտետում – 71,4% (72 %),

Գյուղ.մեքենայացման ֆակուլտետում – 70,6% (74%),

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում – 69,7 (62 %):

Համալսարանում ուսանողների գնահատականների միջին բալը I կիսամյակում կազմել է 3,6 (անվճար համակարգում` 4,3):

Առաջին կիսամյակում հիմնական քննաշրջանում ըստ առանձին առարկաների բացարձակ առաջադիմության ցածր արդյունքներ չեն գրանցվել: 1-5-րդ կուրսերում 268 քննական առարկաներից 217-ում գրանցվել են 90÷100%-ոց արդյունքներ, ինչը փաստում է այս առումով ֆակուլտետների և ամբիոնների արդյունավետ աշխատանքը:

## **II կիսամյակ**

II կիսամյակում համալսարանում քննություններին պետք է մասնակցեին 2014 ուսանող: Ուսանող քննությունների թիվը կազմել է 6292, որից բուն քննաշրջանում իրականացվել են 5409, որը կազմում է 86 %: Ուսանողների 4,2 %-ը քննություններին չեն ներկայացել, իսկ 9,8 %-ը քննություններին չեն թույլատրվել:

Քննաշրջանի արդյունքներով II կիսամյակում ուսանողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 82,1 %, նախորդ ուստարվա 78,2 %-ի համեմատ, իսկ



քննություններին մասնակցած ուսանողների միջին առաջադիմությունը կազմել է 95,5 %, նախորդ ուստարվա 92,7 %-ի համեմատ:

Այստեղ պետք է նշել, որ վերջին տարիներին համալսարանում արձանագրվում է ուսանողների բացարձակ առաջադիմության դինամիկ աճ: Այսպես՝ 2013-14 ուստարում այն կազմել է 64,2 %, 2014-15 ուստարում՝ 66,8 %, 2015-16 ուստարում՝ 72,9 %, 2016-17 ուստարում՝ 77,6 %, իսկ 2017-18 ուստարում՝ 82 %:

II կիսամյակում ըստ ֆակուլտետների արձանագրվել են բացարձակ առաջադիմության հետևյալ արդյունքները.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում – 87,3% (87%),

Անասնաբուժական ֆակուլտետում – 83,7% (81%),

Տնտեսագիտական ֆակուլտետում- 82,6% (80%),

Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում – 76,7 % (70 %),

Ագրոնոմիական ֆակուլտետում – 75,4% (79,9 %),

Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության ֆակուլտետում – 72,8 % (63%),

Գյուղ.մեք. և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետում – 63,1 % (67 %):

Ըստ կուրսերի առավել բարձր ցուցանիշ՝ 87 % գրանցվել է III կուրսերում, իսկ ամենացածրը՝ 1-ին կուրսերում՝ 73,5 %:

II կիսամյակում ուսանողների առաջադիմության միջին բալը կազմել է 3,6 (անվճար համակարգում՝ 4,3 վճարովին՝ 3,4): II կիսամյակում նույնպես որևէ առարկայի գծով բացաշձակ առաջադիմության ցածր արդյունք չի գրանցվել: 1-ից 4-րդ կուրսերում 228 քնական առարկաներից 197-ում գրանցվել են (90÷100)% արդյունքներ:

Չնայած քննություններին չմասնակցած ուսանողների թիվը տարեցտարի նվազում է, այնուամենայնիվ քննություններին չմասնակցած 16,5 միջին ցուցանիշն էականորեն ազդում է ուսանողների առաջադիմության վրա:

Ուսանողների բացարձակ առաջադիմություն ըստ ֆակուլտետների (16÷24)% տարբերությունը, որոշ դեպքերում առաջադիմության ցածր արդյունքները և քննություններին չներկայացած ու չթույլատրված թվերը պետք է անհանգստացնեն համապատասխան դեկաններին և ամբիոնի վարիչներին, ովքեր լուրջ անելիքներ ունեն կիսամյակի ողջ ընթացքում ուսանողների գիտելիքների անընդհատ ստուգման, միջանկյալ քննությունների պատշաճ անցկացման, խորհրդատվությունների

կազմակերպման, հիմնական քննաշրջանին ուսանողների առավելագույն մասնակցության ապահովման, պարտքատեր ուսանողների թվաքանակի նվազեցման և ուսանողների առաջադիմության կայուն և օբյեկտիվ աճ ապահովելու առումներով:

2018 թվականի հուլիսի 24-ի դրությամբ ըստ ֆակուլտետների առարկայական պարտք ունեցող ուսանողների թիվը հետևյալն է.

Ագրոնոմիական ֆակուլտետում 41 ուսանող, Անասնաբուժական ֆակուլտետում 78, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում 62, Գյուղ.մեքենայացման և ԱՏ ֆակուլտետում 44, Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության ֆակուլտետում 31, Տնտեսագիտական ֆակուլտետում 102, Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում 20 ուսանող:

Համալսարանում ակադեմիական պարտքեր ունեն ընդամենը 378 ուսանող, որից մեկ պարտքով՝ 123, երկու պարտքով՝ 96, երեք և ավելի պարտքով՝ 159 ուսանող: 105 ուսանող ունեն միայն ստուգարքային պարտքեր:

#### **5. ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ (ՆԱԽԱԳԾԵՐԻ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

2017-18 ուսումնական տարվա սկզբին համալսարանում ավարտական կուրսերի ուսանողների թիվը կազմել է 394, որից պետական քննություններին և դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը թույլատրվել են մասնակցելու 362-ը և նրանցից 359-ը ստացել են դրական գնահատականներ: Երեք ուսանող անհարգելի պատճառներով չեն ներկայացել պաշտպանության: Պետական քննական հանձնաժողովների որոշմամբ 57 շրջանավարտ (145,8 %) ստացել են գերազանցության դիպլոմ:

Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը մասնակցել են 313 ուսանող, որից 143-ը ստացել են „5” գնահատական (45,7 %), 123 –ը՝ „4” (39,3 %) և 47-ը՝ „3” գնահատական (15 %): Անբավարար գնահատական ստացող չի եղել:

Նախորդ տարիների շրջանավարտներից այս ուսումնական տարում պետական քննություններին և դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը թույլատրվել են մասնակցելու 8 ուսանող:

Այսպիսով՝ 2017-18 ուստարում առկա ուսուցման համակարգում 367 շրջանավարտի շնորհիվ է բակալավրի որակավորման աստիճան:

2017-18 ուստարում հեռակա ուսուցման 20 մասնագիտությունների գծով տեսական կուրսն ավարտած 620 ուսանողներից 609-ը հաջողությամբ հանձնել են պետական քննությունները ու պաշտպանել դիպլոմային աշխատանքները և ստացել են բակալավրի որակավորում:

Այս ուստարում հեռակա ուսուցման համակարգի ևս 47 շրջանավարտների շնորհիվ էլ բակալավրի որակավորում:

Այսպիսով՝ 2017-18 ուստարում բակալավրային ուսուցման առկա և հեռակա համակարգերում համալսարանն ավարտել է 1023 (367+609+47) շրջանավարտ:

Համալսարանի պետական քոլեջում պետական քննություններին և դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը թույլատրված 116 սովորողներից 115 մասնակցել և հաջողությամբ հանձնել են պետական քննություններն ու պաշտպանել դիպլոմային աշխատանքները: մեկ սովորող մեկնել է զինվորական ծառայության:

Քոլեջի 115 շրջանավարտից 5-ը արժանացել են գերազանցության դիպլոմի:

Պետական ատեստավորման արդյունքները և հանձնաժողովների առաջարկություններն ու դիտողությունները քննարկվել և ֆակուլտետների և համալսարանի գիտական խորհուրդներում:

## **6. ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ**

### **ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԻՃԱԿԸ**

Ուսանողների տեսական գիտելիքների ձեռքբերմանը զուգընթաց շատ կարևոր է նաև գործնական ու կիրառական հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաները բացի համալսարանի ուսումնափորձնական տնտեսություններից ու գիտական կենտրոններից, իրականացվում են նաև հաննապետության այլ արտադրական կազմակերպություններում, գյուղացիական ու ֆերմերային տնտեսություններում, անասնաբուժական կայաններում, բանկերում, միջազգային կազմակերպություններում և այլ առաջատար տնտեսություններում: Ելնելով արտադրական գործընթացների սեզոնային առանձնահատկություններից մի շարք մասնագիտությունների գծով պրակտիկաները հիմնականում կազմակերպվում են

գարնանային և ամառային ամիսներին, իսկ որոշ դեպքերում նաև սահող գրաֆիկով: Հարկ եմ համարում նշել, որ այսօրվա դրությամբ՝ համաձայն կնքված պայմանագրերի, մինչև 2021 թվականը բոլոր մասնագիտությունները գրեթե ապահովված են ուսումնաարտադրական պրակտիկաների բազաներով:

Պրակտիկաների անցկացման համար, այսօրվա դրությամբ Երևան քաղաքի և հանրապետության մարզերի տարբեր կազմակերպությունների հետ մինչև 2021 թվականը համալսարանն ունի թվով 115 կնքված պայմանագրեր:

Քննարկվող ուստարում պրակտիկաների անցկացման համար տարբեր կազմակերպությունների հետ կնքվել կամ վերակնքվել են թվով 11 նոր պայմանագրեր:

Ուսումնական տարվա կտրվածքով ուսումնական պրակտիկաներին ուսանողների մասնակցության միջին ցուցանիշներն ըստ ֆակուլտետների հետևյալն են.

Ագրոնոմիական ֆակուլտետում- 82,3 %, Անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետում – 81,4 %, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում – 90,5 %, Գյուղ.մեքենայացման և ԱՏ ֆակուլտետում – 71,8 %, Հիդրոմեխանիկայի, հողաշինարարության ֆակուլտետում – 87,3 %, Տնտեսագիտական ֆակուլտետում – 78,4 %, Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում – 87,8 %, Քոլեջում 92,2 %: Միջինը համալսարանում – 84 %, նախորդ ուստարվա 84,9 %-ի համեմատ:

Ֆակուլտետների ղեկանները, ամբիոնները և պրակտիկաների կազմակերպման բաժինը անհրաժեշտ քայլեր պետք է ձեռնարկեն ուսումնաարտադրական և նախադիպլոմային պրակտիկաներն ավելի արդյունավետ դարձնելու և պրակտիկաներին ուսանողների անհարգելի բացակայությունները բացառելու ուղղությամբ:

## **7. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման ու զարգացման և երիտասարդության ու համալսարանի մյուս շահակիցների շրջանում մասնագիտական կողմնորոշում անցկացնելու նպատակով համալսարանում վերջին տարիներին մեծ ծավալի աշխատանքներ են տարվում:

Այդ նպատակով համալսարանի բազմաթիվ աշխատակիցներ տարվա ընթացքում այցելում են Երևան քաղաքի և հանրապետության տարբեր մարզերի միջնակարգ ու ավագ դպրոցներ, արհեստագործական ուսումնարաններ և քոլեջներ:

Բացի այդ վերջին երեք տարիներին համալսարանի առօրյաին ծանոթացնելու և մասնագիտական կողմնորոշում անցկացնելու նպատակով Երևանի, Երևանամերձ համայնքների ավագ դպրոցների աշակերտների, արհեստագործական ուսումնարանների և քոլեջների սովորողների համար կազմակերպվում են ճանաչողական այցեր համալսարան: Այս շրջանակներում՝ 2017-18 ուստարում հանրապետության 40 դպրոցների շուրջ 900 աշակերտ այցելել են համալսարան, ծանոթացել են ագրարային ոլորտի մասնագիտություններին, համալսարանի ընդունելության արտոնյալ պայմաններին և ուսանողական կյանքին:

Այսուհանդերձ, մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները դեռևս բավարար չեն: Հայտնի է, որ այսօր դիմորդների հավաքագրման առումով բուհերի մեջ ընթանում է կոշտ մրցակցություն, ուստի համալսարանի յուրաքանչյուր աշխատակից մեծ պատասխանատվությամբ պետք է մոտենա մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին և համալսարանի ողջ կոլեկտիվի ջանքերով է միայն հնարավոր ապահովել ուսանողական անհրաժեշտ համակազմ՝ ինչն էլ հանդիսանում է համալսարանի զարգացման հիմնական նախապայմաններից մեկը:

### **ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԸ**

Համալսարանը տարիներ շարունակ նպատակասլաց աշխատանքներ է իրակա-նացնում բնականոն սերնդափոխության ապահովման, դասախոսական կազմի երիտասարդացման և նրանց կայացման ու առաջընթացի ուղղությամբ: Այս նպատակով 2017թ. աշխատանքի է ընդունվել 10 երիտասարդ դասախոս:

Համաձայն ՀԱԱՀ հաստատված հաստիքացուցակի՝ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ համալսարանի և դրա մասնաճյուղերի առկա փաստացի հիմնական

աշխատակիցների թիվը կազմում է 1527, որից Վանաձորի մասնաճյուղում՝ 26, Միսիանի մասնաճյուղում՝ 26, Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոնում՝ 65, Շիրակի՝ ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջում՝ 38, Խաղողագիներծության գիտական կենտրոնի մասնաճյուղում՝ 32: Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն մասնաճյուղում՝ 24

Համալսարանի հիմնական փաստացի աշխատակիցների թիվը կազմում է 1316:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում 2017-2018 թթ. ուսումնական գործընթացն իրականացրել են 559 դասախոս (առանց համատեղությունների). պրոֆեսորները կազմել են 8,7% (49), դոցենտները՝ 40,8% (228), դասախոսները և ավագ դասախոսները՝ 22,9 % (128), ասիստենտները 27,5 % (154), այսինքն՝ դասախոսական կազմի 49,5 %-ը պրոֆեսորներ և դոցենտներ են (աղ. 50):

## **8. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ**

Համալսարանի կրթական ոլորտի շարունակական բարեփոխումներն անհրաժեշտություն են, քանի որ դրանք նպաստում են համալսարանին իր գործունեությունը համապատասխանեցնելու երկիր տնտեսության և ագրարային ոլորտի աշխատաշուկայի ներկա պահանջներին և բարձրացնելու իր արտաքին գրավչությունն ու մրցունակությունը:

Բոլոնիայի գործընթացի և ագրարային ոլորտի ժամանակակից պահանջներին համապատասխան այսօր խիստ արդիական է դարձել համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի կառուցվածքային, այնպես էլ բովանդակային փոփոխությունների իրականացումը: Նոր սերնդի կրթական ծրագրերի նախագծման, վերանայման և բարելավման համար մեկնակետ հանդիսացավ շրջանավարտների ակնկալվող կրթական վերջնարդյունքների հիման վրա ձևավորված կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչը հնարավորություն տվեց կրթական ծրագրերի կառուցվածքն ու բովանդակությունը հնարավորինս համապատասխանեցնելու աշխատաշուկայի պահանջներին, ինչն էլ իր հերթին կարևորագույն

նախադրյալ է շրջանավարտների ծառայունակության, մրցունակության և կարիերայի հնարավորությունների բարձրացման առումով:

Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի և դասավանդվող առարկաների առարկայական ծրագրերի վերանայման ու բարելավման նպատակով, համապատասխան ոլորտների գործատուների մասնակցությամբ ստեղծվեցին փորձագիտական խմբեր և 2016, 2017 և 2018 թվականներին աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ուսանողների և համալսարանի մյուս շահակիցների սպասելիքներին համահունչ արմատապես վերանայվեցին ու բարելավվեցին բակալավրային և մագիստրական կրթական ծրագրերի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը:

Վերը նշված աշխատանքներին զուգընթաց Tempus Armenia դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ՝ Որակավորումների եվրոպական և Ազգային շրջանակների պահանջներին համապատասխան՝ մշակվեց «Որակավորումների գյուղատնտեսության շրջանակը» և այժմ էլ աշխատանքներն են տարվում համալսարանի՝ ըստ բլոկների ոլորտային շրջանակները մշակելու ուղղությամբ:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի և բաղադրիչների արդյունավետ ձևավորման նպատակով 2016-2018 թվականներին դասախոսական կազմի վերապատրաստման նվիրված իրականացվեցին բազմաթիվ սեմինարներ և թրեյնինգներ և իրականացված աշխատանքների արդյունքում համալսարանի մասնագետների կողմից մշակվեց մասնագիտության կրթական ծրագրերի փաթեթի ձևաչափ (մոդել), որի հիման վրա 2017-2018 թվականների ընթացքում մշակվեցին համալսարանում իրականացվող բոլոր 30 մասնագիտությունների փաթեթները՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար:

Ելնելով աշխատաշուկայի ներկա պահանջներից և հիմք ընդունելով համալսարանում առկա դասախոսական ու նյութատեխնիկական անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածությունը կազմեցին և ընթացիկ ուստարում հաստատվեցին «Անասնաբուժական դեղագիտություն», «Ագրոգրոսաշրջություն», «Կենդանական ու բուսական ծագման սննդամթերքի անվտանգություն և փորձաքննություն», մասնագիտությունների ուսումնական պլանները:

Վերջին տարիներին համալսարանում ձևավորվեց և այժմ արդեն գործում է Ռրակի ներքին ապահովման համակարգը, իրականացվում է որակի ապահովման ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրության և հնարավորին տեղայնացում:

ՌԻսուցանելու կամ վերապատրաստման նպատակով համալսարանում պարբերաբար իրականացվել է ուսումնառողների և դասախոսական կազմի շարժունության ապահովում արտերկրյա համալսարաններ: Պարբերաբար իրականացվում է դասախոսական կազմի մասնագիտական որակների և դասավանդման որակի և համալսարանի շահակիցների կարիքների և կրթական գործունեության մշտադիտարկում և գանհատում:

- Համալսարանի կողմից հաստատված չափորոշիչների հիման վրա գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի միջոցով իրականացվում է ուսանողների գիտելիքների գնահատում և սահմանված ժամանակացույցի համաձայն վերապատ-րաստումների միջոցով՝ դասախոսական կազմի որակավորման բարձրացում:

Իրականացվել է համալսարանի նյութատեխնիկական բազայի համակարգչային տեխնիկայով համալրում և նոր մասնագիտական լաբորատորիաների բացում և նոր կրթական տեխնոլոգիաների ներդրում:

Իրականացվել է համալսարանում ինֆորմացիոն հոսքերի կառավարման ավտոմատ ինֆորմացիոն համակարգերի մշակում և ներդրում և Համալսարանի կայք էջի միջոցով հասարակությունը կանոնավոր տեղեկատվության տրամադրում:

Ապահովվել է համալսարանի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը և Համալսարանի շահակիցների հետ պարբերաբար ապահովվել է հետադարձ կապ:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի արդյունավետ իրագործման նպատակով Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրակա-նացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակում 2017 թվականին համալսարանում ձևավորվեց աշխատանքային խումբ, որի կողմից 2017 թվականի մայիս-նոյեմբեր ամիսներին մշակվեցին հետևյալ փաստաթղթերը.



1. Էթիկայի կանոնագիրք համալսարանի ուսումնառողների համար
2. Էթիկայի կանոնագիրք համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի համար
3. Էթիկայի կանոնագիրք համալսարանի կառավարման մարմինների համար
4. Էթիկայի հանձնաժողովի կանոններ
5. Շահերի բաշխման քաղաքականություն
6. Գիտական ազնվության և գրագողության դեմ քաղաքականություն
7. Կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն
8. Ահազանգողների պաշտպանության քաղաքականություն

Մշակված փաստաթղթերի նախագծերը նաօրոք տեղադրվել են համալսարանի կայք-էջում և բաժանվել են բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին: Ստացված դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են և հաշվի են առնվել փաստաթղթերի մշակման հաջորդ փուլում:

Լայն քննարկումների արդյունքում մշակված փաստաթղթերը նպատակ ունեն բարելավել կրթական ոլորտի օրանսդրական և ինստիտուցիոնալ կարողությունները, մասնավորապես՝ բարձրագույն կրթության շահառուների շրջանում բարձրացնել կոռուպցիոն ռիսկերի և բարեվարքության ամրապնդման ռազմավարությունների վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև ավելացնել վերջիններիս օրենսդրական գիտելիքները և փորձը կոռուպցիայի դեմ պայքարում:

Համալսարանի գործունեության տարբեր ոլորտների խնդիրները բացահայտելու, վերլուծելու գնահատելու և բարելավելու համար շատ կարևոր գործիքակազմ է հանդիսանում համալսարանի շահակիցների կրթական կարիքների բացահայտումը: Այս առումով համալսարանում վերջին չորս տարիներին մեծ ծավալի աշխատանքներ են տարվում և 2017-2018 ուստարում թվով 1373 ուսանողների, 271 շրջանավարտների և 440 դասախոսների շրջանում անցկացվել են կրթական կարիքների բացահայտմանն ուղղված հարցումներ, որոնց արդյունքները մշակվել են SPSS ծրագրով, կատարվել են վերլուծություններ և դրանց արդյունքների հիման վրա ընդունվել են համապատասխան որոշումներ:

2017-2018 ուստարում Ուսումնամեթոդական կենտրոնի աշխատակիցների կողմից համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի համար բազմաթիվ

սեմինարներ են կազմակերպվել կրթական ծրագրերի փաթեթների մշակման, ինքնավերլուծության իրականացման, կրթական նորագույն տեխնոլոգիաների և ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրման, Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների համադրման և ագրարային ոլորտի որակավորումների շրջանակների մշակման հարցերով:

2017-2018 ուստարում մշակվեց և հաստատվեց Համալսարանի զարգացման 2018-2022 թվականների ռազմավարական ծրագրերը և ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցը, որի համար հիմք հանդիսացավ նախորդ ռազմավարական ծրագրի իրականացման SWOT վերլուծության ու համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների արդյունքները, ինչպես նաև շահակիցների շրջանում բացահայտված կրթական կարիքները:

Համալսարանի զարգացման ռազմավարական նոր ծրագրի դրույթներին համապատասխան մշակվեցին և հաստատվեցին նաև ֆակուլտետների զարգացման ռազմավարական ծրագրերը:

2015 թվականից սկսած Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի կողմից նախագծվեց և ներկայումս շարունակվում է համալսարանի ավտոմատացված կառավարման համակարգի կատարելագործման ու վերջնական ներդրման աշխատանքները: Այս համակարգը հնարավորություն է տալիս տեղեկատվական արդի տեխնոլոգիաների կիրառմամբ համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպել արդի կրթական չափորոշիչներին համապատասխան: 2017 թվականից սկսած edu.h.am համակարգով իրականացվում է դասախոսական կազմի վերապատրաստումներ ամբիոնների ուսումնական ծանրաբեռնվածության, դասահաճախումների և գնահատականների մուտքագրման և վերահսկողության վերաբերյալ:

Համալսարանում փաստաթղթաշրջանառության առավել օպերատիվ կառավարման, տեղեկատվության արագ տարածման, ինչպես նաև համալսարանի և արտաքին ծահառուների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացն առավել արդյունավետ ու թափանցիկ դարձնելու նպատակով իրականացվում են Mulberry էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքները:

SS աշխատակիցների կողմից շարունակվում է էլեկտրոնային ուսուցման զարգացման և դասախոսների վերապատրաստման գործընթացը և վերջին երկու տարում այս ծրագրով վերապատրաստվել են շուրջ 90 դասախոս: Այս ծրագիրը շարունակական է և առաջիկայում նախատեսվում է ծրագրում ընդգրկել նոր խմբեր:

Տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացման պայմաններում ավելի է կարևորվում դրանց դերը գյուղատնտեսության կայացման առաջընթացի գործում: SS կենտրոնի կողմից այժմ մշակվում է խորհրդատվական տեղեկատվական հարթակ, որը համացանցի միջոցով հասանելի կլինի գյուղացիներին և գյուղացիական տնտեսություններին՝ ապահովելով նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ, ստեղծվելու են հետադարձ կապի մեխանիզմներ՝ հնարավորություն ընձեռելով ֆերմերներին համալսարանի մասնագետներից ստանալ համապատասխան տեղեկատվություն:

Կրթական ծրագրերի կնտրոն ԾԻԳ-ի կողմից տրամադրված դրամաշնորհային ծրագրի և սեփական ֆինանսավորման միջոցով իրականացվեց «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագիրը, որի հիմնական նպատակն է գինեգործական կրթության համար ստեղծել նյութատեխնիկական բազա, մեկ միասնական համակարգի մեջ միավորել համալսարանին պատկանող տարբեր ստորաբաժանումների համապատասխան գիտական ու նյութական ռեսուրսները՝ ապահովելով գինեգործության ոլորտի բարձրորակ մասնագետների թողարկումը:

2017-2018 ուստարում շարունակվել են համալսարանի միջազգայնացմանն ու արտաքին կապերի ընդլայնմանն ուղղված աշխատանքները:

Ներկայումս համալսարանը շուրջ 102 գործող պայմանագրեր ունի եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ տարբեր համալսարանների ու կազմակերպությունների հետ: Այս ուստարում կնքվել կամ վերահաստատվել են թվով 19 պայմանագրեր ու հուշագրեր: Համալսարանի համար կարևոր կունսիցիումներ են ԱՊՀ առաջատար ագրարային բուհերի խորհուրդը և Եվրոմիության Էրազմուս+ ցանցային ծրագրերի բուհերը:

2017-18 թվականներին Էրազմուս+միջազգային կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում շուրջ 20 եվրոպական համալսարանների հետ

իրականացվել են սեմինարներ ու վերապատրաստումներ: Այս ժամանակահատվածում համալսարանն ունեցել է 27 էրազմուս+ ծրագրեր, որից 21-ը նոր ծրագրեր են:

Ներկայումս համալսարանը պայմանագրեր ունի գերմանական մի քանի կազմակերպությունների հետ, որն ապահովում է մեր ուսանողների պրակտիկաները Գերմանիայի դաշնությունում: Այս տարի համալսարանն առաջին անգամ ունի ինտիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված 2 նոր՝ էրասմուս+ հիմնական գործողություն 2 ծրագրեր, որոնց նպատակն է ներդնել ու բարելավել կրթական վերջնարդյունքների վրա հիմնված մասնագիտական կողմնորոշման գործնական ծրագրերը և հայաստանյան ու եվրոպական համալսարանների միջև ստեղծել միջառարկայական, հաղորդակցական ու կառավարման ցանց՝ կենսարտադրանքների տեխնոլոգիայի ոլորտում համատեղ կրթություն իրականացնելու նպատակով: Եվրասիա կրթական ծրագրի ֆինանսավորմամբ 2017 թվականից Նորվեգիայի Թրոմսոյի համալսարանի հետ համատեղ հաջողությամբ իրականացվում է «Գյուղատնտեսական զարգացման համար Նորվեգիա-Հայաստան համագործակցություն» ծրագիրը, որի արդյունքում մշակվել են նոր դասընթացներ և «Բույսերի կենսատեխնոլոգիա» ուսումնական ձեռնարկը: Այս ծրագրի ընթացքում ուսանողների մասնակցությամբ իրականացվում են երեք գիտահետազոտական պիլոտային ծրագրեր:

Appear ծրագրի շրջանակներում Վիեննայի բնական ռեսուրսների համալսարանի օժանդակությամբ հաջողությամբ իրականացվում է նաև «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» ծրագիրը:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի բազմաթիվ աշխատակիցներ ու ուսանողներ տարբեր ծրագրերի շրջանակներում եվրոպական տարբեր համալսարաններում մասնակցել են սեմինարների ու վերապատրաստումների:

Երկկողմանի կապերի ստեղծման ու ընդլայնման նպատակով 2017-2018 ուստարում համալսարանում կազմակերպվել են շուրջ 53 հանդիպումներ ու քննարկումներ, արտերկրի թվով 16 դասախոսներ դասախոսություններ են անցկացրել համալսարանում տարբեր թեմաների շուրջ:

Բազմաթիվ այցեր ու հանդիպումներ են եղել Վայնշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի ներկայացուցիչների հետ <<Ագրարմենեջմենթ>> միջազգային մագիստրական ծրագրի շրջանակներում:

2017-18 ուստարում համալսարանի տարբեր ստորաբաժանումների Բազմաթիվ աշխատակիցներ մասնակցել են ՀՀ-ում կազմակերպված կրթական բարեփոխումներին միտված տարաբնույթ միջոցառումների: